



**ԵՎՐՈՊԱՅԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ
18-ՐԴ ԱՍԵՆԱՄՅԱ ՀԱՄԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ
ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2009 Թ.**

Նախագահող: Գ. Ազարյան, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
նախագահ, ԵԸԻԸ նախագահ

Գլխավոր վեհաժողովի որոշում

1. Գլխավոր վեհաժողովը քննարկել է Գործադիր կոմիտեի հետևյալ
որոշումները՝

- ✓ 2010-2014թթ ԵԸԻԸ ռազմավարության մշակման նպատակով
Ռազմավարության պլանավորման կոմիտեի ստեղծման
նախաձեռնության մասին.
- ✓ 2010թ-ից սկսած ամենամյա կոնֆերանսը հյուրընկալելու մասին
հայտը պետք է ներառի՝ ա) բյուջեի մանրամասն նախագիծ, բ)
թեմա.
- ✓ 2010թ-ից սկսած նախագահող երկիրը պետք է հոգա դեպի
համաժողովի անցկացման երկիր մասնակիցների անվտանգ
տեղափոխումը.

Գլխավոր վեհաժողովն ընդունեց Գործադիր կոմիտեի բոլոր 3
նախաձեռնությունները միաձայն:

2. Գլխավոր վեհաժողովը լսեց և ընդունեց պրն. Ժուլտ Ջոլնոկիի կողմից
ներկայացված 18-րդ ամենամյա համաժողովի առաջարկությունները,
ինչպես նաև պրն. Անդրաշ Քեյլի կողմից ներկայացված սոցիոլոգների
առաջարկությունները:



3. Գլխավոր վեհաժողովը լսեց և ընդունեց կազմակերպության գործունեության վերաբերյալ պրն. Աթիլա Կոսաշի /«Անցումային ժողովրդավարություններում ճշգրիտ ընտրական ցուցակների կազմում» ՄԱԶԾ օժանդակությամբ/, պրն. Ժոլտ Զոլնոկիի /Եվրախորհրդարանի ընտրությունների ամփոփում և գնահատում (Բուդապեշտ, Հունգարիա, 3 հուլիս, 2009)/, պրն. Ստեփան Ահիյի /Ընտրությունների վերաբերյալ տեղեկատվական ցանցեր, «Ընտրությունները Եվրոպայում» տարեկան հրատարակություն/, Աննա Շոյոմի /Մեքսիկայի ընտրական դաշնային ինստիտուտի և ԵԼԻԸ համագործակցության մասին պայմանագիր/, պրն. Զոլտան Տոտի /Աֆղանական ընտրական մարմինների իրազեկության բարձրացում/ զեկույցները:
4. Գլխավոր վեհաժողովը միաձայն ընդունեց ԵԼԻԸ Գլխավոր քարտուղարի 2008-2009 ամենամյա զեկույցը, ինչպես նաև կազմակերպության 2008-2009 ֆինանսական զեկույցը:
5. Գլխավոր վեհաժողովը միաձայն ընդունեց Մեմ Յանգերին որպես ընկերակցության նոր Պատվավոր անդամ, ինչպես նաև Սլովենիայի կենտրոնական ընտրական հանձնաժողովին որպես ԵԼԻԸ նոր անդամ:
6. Գլխավոր վեհաժողովը միաձայն ընդունեց կազմակերպության 2010թ աշխատանքային ծրագիրը:
7. Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ պրն. Լ. Տարխնիշվիլիի և Մոլդովայի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ պրն. Ե. Շտիրբուի զեկույցները լսելուց հետո Գլխավոր վեհաժողովը միաձայն ընդունեց Գործադիր կոմիտեի նախնական որոշումը հետևյալ ձևակերպմամբ. «2009թ սեպտեմբերից մինչև 2010թ ապրիլ ամիսը կայանալիք Գործադիր կոմիտեի նիստը պրն. Ե. Շտիրբուն կնախագահի կազմակերպությունը, իսկ Մոլդովայի



հանձնաժողովը իրավունք է ստանում կազմակերպել Գործադիր կոմիտեի հաջորդ նիստը, ինչպես նաև ՄԱԶԾ օժանդակությամբ իրականացվող «Անցումային ժողովրդավարություններում ճշգրիտ ընտրական ցուցակների կազմման» ծրագրի նիստը Քիշնևում, Մոլդովա, ապրիլ, 2010թ: Այնուհետև, սկսած 2010թ ապրիլ ամսից, պրն. Լ. Տարխանիշվիլին կշարունակի նախագահել կազմակերպությունը, իսկ Վրաստանի ԿԸՀ-ն կկազմակերպի ԵԸԻԸ 19-րդ ամենամյա համաժողովը 2010թ սեպտեմբերին:

8. Գլխավոր վեհաժողովը Մոլդովայի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ պրն. Ե. Շտիրբուին ընտրեց կազմակերպության նախագահ մինչև 2010թ ապրիլ ամիսը: Գլխավոր վեհաժողովը Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ պրն. Լ. Տարխանիշվիլին ընտրեց կազմակերպության նախագահ սկսած 2010թ ապրիլ ամսից:

9. Գլխավոր վեհաժողովը միաձայն ընդունեց պրն. Ժոլտ Ջոլնոկիի կողմից ներկայացված առաջարկը՝ 20-րդ ամենամյա տոնական համաժողովի անցկացման վայրի մասին. 20-րդ ամենամյա տոնական համաժողովը կանցկացվի Բուդապեշտում, Հունգարիա, 2011թ.: